ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 02.10.2020թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ԳԲՔԱ-LO-2020/94

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Է. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Ռ. Մկրտչյանի

Պատվիրատու՝ Երևանի քաղաքապետարան
Բողոք բերող՝ «Տ-Քնսթրաքշն» ՓԲԸ

Մասնակցությամբ՝
«Տ-Քնսթրաքշն» ՓԲԸ-ի ներկայացուցիչներ՝ Մ. Խաչատրյանի, Ն. Դավթյանի, Ա. Պարանյանի,

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ԵՔ-ԳՀԱՇՁԲ-20/118» ծածկագրով գնանշման հարցում, Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի բակերի բարեկարգման աշխատանքների ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ քննության առնելով «Տ-Քնսթրաքշն» ՓԲԸ-ի (այսուհետ՝ նաև Ընկերություն) կողմից 11.09.2020թ.-ին ներկայացրած բողոքը (այսուհետ՝ նաև Բողոք) և կից փաստաթղթերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. **<u>Գործի նախապատմությունը</u>**

Դիմելով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ Ընկերությունը ներկայացրած բողոքով խնդրել է պարտավորեցնել Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի բակերի բարեկարգման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարված «ԵՔ-ԳՀԱՇՁԲ-20/118» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին դադարեցնել թիվ 3 արձանագրության 1.1 կետով «Տ-Քնսթրաքշն» ՓԲԸ-ի հայտը մերժելու մասին որոշումը:

Բողոքներ քննող անձին (Գ. Ներսիսյանին) բողոքը մակագրվել է 11.09.2020թ.-ին: Բողոքներ քննող անձի (Գ. Ներսիսյանի) 14.09.2020թ.-ի որոշմամբ գործը ընդունվել է վարույթ և տրվել թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2020/90 համարի ծածկագիրը:

Հիմք ընդունելով ՀՀ ֆինանսների նախարարի 14.09.2020թ.-ի թիվ 255-Ա Բողոքներ քննող անձ՝ Գ. Ներսիսյանին 2020-2021թ.-երի աշխատանքային տարվա ամենամյա արձակուրդ տրամադրելու մասին հրամանը, թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2020/90 համարի ծածկագրով բողոքի քննությունը 15.09.2020թ.-ին փոխանցվել է Բողոքներ քննող անձ Լ. Օհանյանին:

16.09.2020թ.-ին կայացված որոշմամբ բողոքը ընդունվել է վարույթ, տրվել է թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2020/94 համարի ծածկագիրը և հրապարակվել է www.gnumner.am կայքում:

23.09.2020թ.-ին և 02.10.2020թ.-ին նշանակվել են նիստեր:

Բողոքի քննությունն ավարտվել է 23.09.2020թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 02.10.2020թ.-ին:

2. «Տ-Քնսթրաքշն» ՓԲԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.

«Տ-Քնսթրաքշն» ՓԲԸ-ն 11.09.2020թ.-ին ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

«Երևանի քաղաքապետարանի կարիքների համար «Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի բակերի բարեկարգման աշխատանքների» ձեռքբերման նպատակով հայտարարվել է "ԵՔ-ԳՀԱՇՁԲ-20/118" ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

"ԵՔ-ԳՀԱՇՁԲ-20/118" ծածկագրով ընթացակարգով պահանջված աշխատանքների կատարումը նախատեսված է պայմանագիրն ուժի մեջ մտնելուց 60-րդ օրացուցային օրը ներառյալ:

Վերոնշված Ընթացակարգին, ի թիվս այլ ընկերության, հայտ է ներկայացրել նաև «Տ-Քնսթրաքշն» ՓԲԸ-ն (այսուհետ նաև՝ Ընկերություն):

«Տ-Քնսթրաքշն» ՓԲԸ-ի կողմից Երևանի քաղաքապետարանի կարիքների համար կազմակերպված ԵՔ-ԳՀԱՇՁԲ-20/118 ծածկագրով ընթացակարգին մասնակցության հայտ ներկայացնելիս՝ որպես հայտի ապահովում ներկայացվել է "ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ" ՓԲԸ-ի կողմից 26.08.2020թ. տրամադրված թիվ 854-48 բանկային երաշխիքը, որը գործում է մինչև 28.12.2020թ. /կցվում է/:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 28.08..2020թ. տեղի ունեցած նիստի թիվ 2 արձանագրության 4.1 կետի համաձայն՝ «Տ-Քնսթրաքշն» ՓԲԸ-ի կողմից ներկայացված բանկային երաշխիքի մեջ նշված է, որ այն գործում է մինչև 28.12.2020 թվականը ներառյալ, այն դեպքում, երբ հայտի ապահովումը պետք է վավեր լինի հայտը ներկայացնելու օրվանից հաշված 90 (իննսուն) աշխատանքային օր: «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» ՀՀ կառավարության 526-Ն որոշման 41-րդ հետի համաձայն գնահատող հանձնաժողովը որոշեց կասեցնել նիստը և առաջարկել «Տ-Քնսթրաքշն» ՓԲԸ-ին մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել առկա անհամապատախանությունը: Սահմանված ժամկետում անհամապատասխանությունը չշտկելու դեպքում մասնակցի հայտը կգնահատվի անբավարար և կմերժվի:

Այնուհետև գնահատող հանձնաժողովը 2020թ. օգոստոսի 31-ին, ժամը 17:57-ին ծանուցել է «Տ-Քնսթրաքշն» ՓԲԸ-ին և հայտնել, որ կողմից ներկայացված բանկային երաշխիքի մեջ նշված է, որ այն գործում է մինչև 28.12.2020 թվականը ներառյալ, այն դեպքում, երբ հայտի ապահովումը պետք է վավեր լինի հայտը ներկայացնելու օրվանից հաշված 90 (իննսուն) աշխատանքային օր: «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» ՀՀ կառավարության 526-Ն որոշման 41-րդ հետի համաձայն գնահատող հանձնաժողովը որոշեց կասեցնել նիստը և առաջարկել Տ-Քնսթրաքշն ՓԲԸ-ին մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել առկա անհամապատախանությունը: Սահմանված ժամկետում անհամապատասխանությունը չշտկելու դեպքում մասնակցի հայտը կգնահատվի անբավարար և կմերժվի:

Original Message-----

From: info@armeps.am [mailto:info@armeps.am]

Sent: Monday, August 31, 2020 5:57 PM

To: info@armeps.am

Subject: Մրցույթի՝ ոչ ավտոմատ ծանուցում

ԵՔ-ԳՀԱՇՁԲ-20/118 ծածկագրով գնման ընթացակարգի մասնակիցներին ծանուցում

Տ-Քնսթրաքշն ՓԲԸ-ի կողմից ներկայացված բանկային երաշխիքի մեջ նշված է, որ այն գործում է մինչև 28.12.2020 թվականը ներառյալ, այն դեպքում, երբ հայտի ապահովումը պետք է վավեր լինի հայտը ներկայացնելու օրվանից հաշված 90 (իննսուն) աշխատանքային օր:

«Գնումների գործընթացի կազմակերպման մասին» ՀՀ կառավարության 526-Ն որոշման 41-րդ հետի համաձայն գնահատող հանձնաժողովը որոշեց կասեցնել նիստը և առաջարկել Տ-Քնսթրաքշն ՓԲԸ-ին մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել առկա անհամապատասխանությունը:

Սահմանված ժամկետում անհամապատասխանությունը չշտկելու դեպքում մասնակցի հայտը կգնահատվի անբավարար և կմերժվի:

Աշխատանքային օրվա ավարտից հետո ստանալով շտկման ծանուցումը՝ «Տ-Քնսթրաքշն» ՓԲԸ-ն հաջորդ աշխատանքային օրը՝ 01.09.2020թ., դիմել է "ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ" ՓԲԸ-ին՝ բանկային երաշխիքի ձևով տրված հայտի ապահովման գործողության ժամկետը երկարացնելու խնդրանքով:

Հաշվի առնելով, որ "ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ" ՓԲԸ-ում նման հարցերով որոշում կայացնելու համար անհրաժեշտ է մեկ աշխատանքային օր, ապա փոփոխված բանկային երաշխիքը «Տ-Քնսթրաքշն» ՓԲԸ-ին բանկի կողմից տրամադրվել է 02.09.2020թ., որից անմիջապես հետո, նույն օրը, ժամը 10:59-ին «Տ-Քնսթրաքշն» ՓԲԸ-ն հայտի ապահովումը տրամադրել է գնահատող հանձնաժողովին:

Սակայն Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 03.09.2020թ. տեղի ունեցած նիստի թիվ 3 արձանագրության 1.1 կետի համաձայն՝ «Տ-Քնսթրաքշն» ՓԲԸ-ի կողմից ներկայացված հայտը ենթակա է մերժման, քանի որ մասնակցի կողմից ներկայացված բանկային երաշխիքի մեջ նշված է, որ այն գործում է մինչև 28.12.2020թ., այնինչ հայտի ապահովումը պետք է վավեր լինի հայտը ներկայացվելու օրվանից հաշված 90 /իննսուն/ աշխատանքային օր: Վերը նշված հանգամանքով պայմանավորված՝ ՓԲԸ-ին 31.08.2020թ. տրվել է անհամապատասխա¬նությունների շտկման հնարավորություն, սակայն «Տ-Քնսթրաքշն» ՓԲԸ-ի կողմից շտկված փաստաթուղթը ներկայացվել է 02.09.2020թ. ժամը 10:59-ին, ուստի ՓԲԸ-ի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ նաև Օրենք) 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ սույն օրենքի նպատակն է ապահովել գնումների գործընթացում հատուցման դիմաց արժեք, այն է՝

1) պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայություն-ների ձեռքբերում՝ համարժեք հատուցմամբ.

2) գնումների և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացում:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

Վերոնշյալ հոդվածների վերլուծության արդյունքում՝ գտնում ենք, որ գնումների օրենսդրությունը, հիմնվելով գնման գործընթացի մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային, ոչ խտրական, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարության սկզբունքների վրա, նպատակ է հետապնդում ապահովելու գնումների գործընթացում հատուցման դիմաց պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայություն-ների ձեռքբերումը՝ համարժեք հատուցմամբ, և որ ամենակարևորն է՝ գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացման ապահովումը:

Ինչպես նաև, ցանկանում ենք հավելել, որ վերոնշյալ սկզբունքների ապահովումն ու իրականացումը գնումների օրենսդրության շրջանակներում իրացնելու համար, անհրաժեշտ պայման է նաև ցանկացած անձի՝ գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք ունենալու սկզբունքը՝ անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից:

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. 526-Ն որոշմամբ հաստատված կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում է գնային առաջարկը, կամ եթե այն ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, բացառությամբ սույն կարգի 41-րդ կետով

նախատեսված դեպքի: Գնումն էլեկտրոնային համակարգով իրականացվելու դեպքում հիմք է ընդունվում համակարգում կցված՝ մասնակցի կողմից հաստատված գնային առաջարկը:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը: Եթե անհամապատասխանությունն արձանագրվել է ՀՀ պետական եկամուտների կոմիտեից ստացված տեղեկատվության հիման վրա, ապա մասնակցին ուղարկվող ծանուցմանը կցվում է նաև կոմիտեից ստացված տեղեկատվության բնօրինակից սկանավորված տարբերակը: Մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:

Վերոգրյալ իրավակարգավորումներից ուղղակի հետևում, որ մասնակիցը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով հայտ, որը ներառում է մասնակցի հաստա¬տած հրավերի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարա¬ությունը, գնային առաջարկը, հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ):

Հայտերը գնահատումն իրականացվում է հրավերով սահմանված կարգով և հրավերով նախատեսված պայմաններին չհամապատասխանող հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Հիմնվելով սույն բողոքի փաստերի հիման վրա՝ կարելի է արձանագրել, որ Երևանի քաղաքապետարանի կարիքների համար հայտարարվել է ԵՔ-ԳՀԱՇՁԲ-20/118 ծածկագրով ընթացակարգ, որին հայտ է ներկայացրել նաև «Տ-Քնսթրաքշն» ՓԲԸ-ն, սակայն ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից «Տ-Քնսթրաքշն» ՓԲԸ-ի ներկայացված հայտը գնահատվել է անբավարար և մերժվել:

«Տ-Քնսթրաքշն» ՓԲԸ-ի կողմից Երևանի քաղաքապետարանի կարիքների համար կազմակերպված ԵՔ-ԳՀԱՇՁԲ-20/118 ծածկագրով ընթացակարգին մասնակցության հայտ ներկայացնելիս՝ որպես հայտի ապահովում, գնահատող հանձնաժողովին է ներկայացվել "ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ" ՓԲԸ-ի կողմից 26.08.2020թ. տրամադրված թիվ 854-48 երաշխիքը, որը գործում է մինչև 28.12.2020թ.:

Օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետի համաձայն՝ հայտի ապահովումը նշված օրենքով նախատեսված դեպքերում մասնակցի կողմից հայտով ստանձնած պարտավորությունների կատարումն ապահովող միջոց է:

Օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտը, որը գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված դեպքերում պարունակում է նաև հայտի ապահովումը, վավեր է մինչև սույն օրենքին հայտը հետ վերցնելը, հայտի մերժումը կամ գնման ընթացակարգը չկայացած հայտարարվելը:

Այսինքն վերոհիշյալ նորմերի ուժով հայտի ապահովման գործողության ժամկետը պետք է պակաս չլինի Օրենքին համապատասխան պայմանագրի կնքման, մասնակցի կողմից հայտը հետ վերցնելու, հայտի մերժելու կամ գնման ընթացակարգը չկայացած հայտարարվելու ժամկետից:

Միաժամանակ գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված են մասնակիցների հայտերի գնահատման, հաղթող մասնակցին որոշելու, անգործության, պայմանագիր կնքելու առավելագույն ժամկետները, որոնք բաց մրցույթի դեպքում կազմում են ոչ ավել, քան 90 օրացուցային օր:

Վերոհիշյալ գնման ընթացակարգի մասնակից «Տ-Քնսթրաքշն» ՓԲԸ-ն հայտը ներկայացրել է 28.08.2020թ.-ին /մինչդեռ հայտի ապահովման տրամադրման ամսաթիվը՝ 26.08.2020թ./, իսկ վերջինիս հայտի ապահովումը գործում է մինչև 28.12.2020թ. ներառյալ: Այսինքն ներկայացված հայտի ապահովման ժամկետը ամբողջությամբ բավարար է մինչև պայմանագիր կնքելը մասնակցի կողմից գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորության խախտման դեպքում այդ հայտի ապահովումը գանձելու համար, հետևաբար ամբողջությամբ ապահովում է մասնակցի կողմից հայտով ստանձնած պարտավորությունների կատարումը:

Ավելին, քանի որ "ԵՔ-ԳՀԱՇՁԲ-20/118" ծածկագրով ընթացակարգի պահանջված աշխատանքների կատարումը նախատեսված է պայմանագիրը ուժի մեջ մտնելու 60-րդ օրացուցային օրը ներառյալ, այսինքն՝ ներկայացված հայտի ապահովման ժամկետը ամբողջությամբ բավարար է անգամ պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարման ժամկետը ապահովելու համար:

Այսպիսով, հիմք ընդունելով վերոհիշյալ փաստական հանգամանքները և իրավական նորմերը՝ գտնում ենք, որ գնահատող հանձնաժողովի կողմից «Տ-Քնսթրաքշն» ՓԲԸ-ի հայտը անբավարար գնահատելու և ապա մերժելու մասին որոշումը չի բխում գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջներից և միտված չէ ապահովելու գնումների և

գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացմանն ու պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնմանը:

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասի իրավական ակտի նորմը մեկնաբանվում է՝ հաշվի առնելով ակտն ընդունելիս այն ընդունող մարմնի նպատակը՝ ելնելով բառերի և ամբողջ հոդվածի, գլխի, բաժնի իրավական ակտի դրույթներից, նորմատիվ իրավական ակտով սահմանված սկզբունքներից, իսկ այդպիսի սկզբունքներ սահմանված չլինելու դեպքում՝ տվյալ իրավահարաբերությունը կարգավորող իրավունքի ճյուղի սկզբունքներից:

Միևնույն ժամանակ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ուշադրությունն ենք հրավիրում նաև այն հանգամանքի վրա, որ բողոքներ քննող անձի կողմից ամբողջությամբ նույն փաստական հանգամանքներում նույնաբովանդակ բողոքները արդեն իսկ բավարարվել են, մասնավորապես թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2019/51 և ԳԲՔԱ-ԼՕ-2019/38 որոշումներով:

Օրինակ, թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2019/51 ծածկագրով բողոքի շրջանակներում կայացրած որոշմամբ բողոքներ քննող անձն արձանագրել է՝ ելնելով վերոշարադրյալ նորմի վերլուծությունից՝ կարելի է եզրահանգել, որ Հանձնաժողովը «Մերձմոսկովյան» ԲԲԸ-ի հայտը մերժելու մասին որոշում կայացնելիս, թույլ է տվել ՀՀ ֆինանսների նախարարի 24.05.2017թ. թիվ 244-Ա հրամանով հաստատված Մրցույթի հրավերի օրինակելի ձևի որևէ ողջամիտ իրավական փաստարկով չհիմնավորվող մեկնաբանություն՝ հաշվի չի առել այն ընդունող մարմնի նպատակը, նորմում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունը, «Գնումների մասին» ՀՀ օրենքի՝ Օրենքի նպատակին, սկզբունքներին և գործողության ոլորտին նվիրված 3-րդ հոդվածի կարգավորման ընդհանուր համատեքստը, ինչի արդյունքում կայացված որոշմամբ խախտվել են գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացման սկզբունքներն ու գնումների մասին ՀՀ օրենսդրության նպատակը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 1-ին կետի «բ» ենթակետով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը որոշեց՝ «Մերձմոսկովյան» ԲԲԸ-ի կողմից 08.07.2019թ. ներկայացրած բողոքը բավարարել ամբողջությամբ:

Բողոքներ քննող անձին խնդրում ենք նկատի ունենալ ևս մեկ կարևոր հանգամանք.

Ինչպես արդեն հայտնել ենք, գնահատող հանձնաժողովը շտկման ծանուցումը մասնակցին ուղարկել է 2020թ. օգոստոսի 31-ին գրեթե աշխատանքային ժամի ավարտից հետո, այն է՝ 17:57-ին:

Աշխատանքային օրվա ավարտից հետո ստանալով շտկման ծանուցումը՝ «Տ-Քնսթրաքշն» ՓԲԸ-ն հաջորդ աշխատանքային օրը՝ 01.09.2020թ., դիմել է "ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ" ՓԲԸ-ին՝ բանկային երաշխիքի ձևով տրված հայտի ապահովման գործողության ժամկետը երկարացնելու խնդրանքով:

Հաշվի առնելով, որ "ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ" ՓԲԸ-ում նման հարցերով որոշում կայացնելու համար անհրաժեշտ է մեկ աշխատանքային օր, ապա փոփոխված բանկային երաշխիքը «Տ-Քնսթրաքշն» ՓԲԸ-ին բանկի կողմից տրամադրվել է 02.09.2020թ., որից անմիջապես հետո, նույն օրը, ժամը 10:59-ին «Տ-Քնսթրաքշն» ՓԲԸ-ն հայտի ապահովումը տրամադրել է գնահատող հանձնաժողովին:

Այլ կերպ ասած, եթե շտկման ծանուցումը օգոստոսի 31-ին ուղարկվեր աշխատանքային ժամերին, օրինակ, մինչև 17:00, այլ ոչ թե գրեթե աշխատանքային ժամի ավարտին՝ ժամը 17:57-ին, ապա «Տ-Քնսթրաքշն» ՓԲԸ-ն կհասցներ նույն աշխատանքային օրվա ընթացքում դիմել "ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ" ՓԲԸ-ին՝ բանկային երաշխիքի ժամկետը երկարացնելու խնդրանքով, և համապատասխանաբար հաջորդ աշխատանքային օրը՝ 01.09.2020թ., շտկված բանկային երաշխիքը բանկից ստանալու հնարավորություն կունենար, մինչդեռ նման ժամին շտկման ծանուցում ստանալը զրկել է Ընկերությանը բանկից 01.09.02020թ. շտկված բանկային երաշխիք ստանալու հնարավորությունից:

Ելնելով վերոգրյալից՝ գտնում ենք, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը խախտել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի՝ Օրենքի նպատակին, սկզբունքներին և գործողության ոլորտին նվիրված 3-րդ հոդվածի կարգավորման ընդհանուր համատեքստը, ինչի արդյունքում խախտվել են գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացման սկզբունքներն ու գնումների մասին ՀՀ օրենսդրության նպատակը:

Օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձն իրավունք ունի պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունների կամ անգործության վերաբերյալ ընդունելու հետևյալ որոշումները.

ա. արգելելու կատարել որոշակի գործողություններ և ընդունել որոշումներ,

բ. պարտավորեցնելու ընդունել համապատասխան որոշումներ, ներառյալ՝ չկայացած հայտարարելու գնման ընթացակարգը, բացառությամբ պայմանագիրը անվավեր ճանաչելու մասին որոշման: »:

Ելնելով վերոգրյալից, Ընկերությունը Բողոքներ քննող անձին խնդրել է՝ պարտավորեցնել Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի բակերի

բարեկարգման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարված «ԵՔ-ԳՀԱՇՁԲ-20/118» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին դադարեցնել թիվ 3 արձանագրության 1.1 կետով «Տ-Քնսթրաքշն» ՓԲԸ-ի հայտը մերժելու մասին որոշումը:

«Տ-Քնսթրաքշն» ՓԲԸ-ն 25.09.2020թ.-ին ներկայացված բողոքի լրացմամբ հայտնել է հետևյալը.

«Ձեր վարույթում է քննվում «Տ-Քեսթրաքշե» ՓԲԸ-ի կողմից 11.09.2020թ. ներկայացրած թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2020/94 ծածկագրով բողոքը, որով «Տ-Քեսթրաքշե» ՓԲԸ-ն խնդրել էր՝ պարտավորեցնել Երևանի քաղաքապետարանի կարիքների համար «Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի բակերի բարեկարգման աշխատանքների» ձեռքբերման նպատակով հայտարարված «ԵՔ-ԳՀԱՇՁԲ-20/118» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին՝ դադարեցնելու հանձնաժողովի նիստի թիվ 3 արձանագրության 1.1 կետի համաձայն «Տ-Քնսթրաքշն» ՓԲԸ-ի հայտը մերժելու մասին որոշումը:

Սյուն գրությամբ «Տ-Քնսթրաքշև» ՓԲԸ-ն ներկայացնում է նոր հստակեցված պահանջներ և խնդրում է թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2020/94 ծածկագրով բողոքի քննության համար հիմք ընդունել բացառապես նոր հստակեցված պահանջները:»:

Ելնելով վերոգրյալից, Ընկերությունը Բողոքներ քննող անձին խնդրել է՝

1. պարտավորեցնել Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի բակերի բարեկարգման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարված «ԵՔ-ԳՀԱՇՁԲ-20/118» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին դադարեցնել հանձնաժողովի նիստի թիվ 2 արձանագրության 4.1 կետով կայացրած՝ «Տ-Քնսթրաքշն» ՓԲԸ-ի կողմից ներկայացված բանկային երաշխիքում անհամապատասխանություն արձանագրելու և շտկում պահանջելու վերաբերյալ որոշումը:

2. պարտավորեցնել Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի բակերի բարեկարգման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարված «ԵՔ-ԳՀԱՇՁԲ-20/118» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին դադարեցնել թիվ 3 արձանագրության 1.1 կետով «Տ-Քնսթրաքշն» ՓԲԸ-ի հայտը մերժելու մասին որոշումը:

3. <u>Երևանի քաղաքապետարանի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստարկները, հիմնավորումները և դիրքորոշումը.</u>

Բողոքներ քննող անձը 17.09.2020թ.-ի թիվ /ԲՔԱ-ԼՕ/2/14095-2020 գրությամբ դիմել Երևանի քաղաքապետարանին՝ (այսուհետ նաև՝ Պատվիրատու), հնարավորություն տալով «Տ-Քնսթրաքշն» ՓԲԸ-ի կողմից 11.09.2020թ.-ին ներկայացված բողոքի վերաբերյալ ներկայացնել անհրաժեշտ բոլոր փաստաթղթերի պատճեններն ու Պատվիրատուի գրավոր կարծիքը:

Պատվիրատուն ստանալով գրավոր դիրքորոշում հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, չի ներկայացրել գրավոր դիրքորոշում, առարկություններ: Պատվիրատուն 23.09.2020թ.-ի թիվ 61/18660 գրությամբ ներկայացրել է ԳԲՔԱ-ԼՕ-2020/94 բողոքի վերաբերյալ անհրաժեշտ փաստաթղթերի պատճենները:

4. <u>ԳԲՔԱ-ԼՕ-2020/94 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

i. Երևանի քաղաքապետարանի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի բակերի բարեկարգման աշխատանքների ձեռքբերման նպատակով 21.08.2019թ.-ին հայտարարվել է «ԵՔ-ԳՀԱՇՁԲ-20/118» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

ii. Ընթացակարգին մասնակցելու նպատակով 28.08.2020թ.-ին հայտ է ներկայացրել նաև «Տ-Քնսթրաքշն» ՓԲԸ-ն:

iii. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 28.08.2020թ.-ի նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ գնահատող հանձնաժողովը հայտերի բացման և գնահատման ընթացքում հրավերի պահանջների նկատմամբ արձանագրել է անհամապատասխանություն, մասնվորապես՝ «Տ-Քնսթրաքշն» ՓԲԸ-ի կողմից ներկայացված բանկային երաշխիքի մեջ նշված է, որ այն գործում է մինչև 28.12.2020թ.-ը ներառյալ, այն դեպքում, երբ հայտի ապահովումը պետք է վավեր լինի հայտը ներկայացվելու օրվանից հաշված 90 (իննսուն) աշխատանքային օր:

iv. Հանձնաժողովը՝ ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետի համաձայն, որոշել է կասեցնել նիստը և առաջարկել Մասնակցին մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել առկա անհամապատասխանությունը: Սահմանված ժամկետում անհամապատասխանությունը չշտկելու դեպքում հայտը կգնահատվի անբավարար և կմերժվի:

v. Հանձնաժողովի 03.09.2020թ.-ի նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ «Տ-Քնսթրաքշն» ՓԲԸ-ն 31.08.2020թ.-ին ծանուցվել է առկա անհամապատասխանությունը շտկելու վերաբերյալ և մինչև ս.թ սեպտեմբերի 1-ը պարտավոր էր շտկել անհամապատասխանությունը: Սակայն «Տ-Քնսթրաքշն» ՓԲԸ-ի կողմից շտկված փաստաթղթերը ներկայացվել են 02.09.2020թ.-ին, ժամը 10:59-ին: Հետևաբար, ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 42-րդ կետի համաձայն, եթե մասնակիցը սահմանված ժամկետում չի շտկում առկա անհամապատասխանությունը, ապա հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է:

Հաշվի առնելով վերոգրյալը, Հանձնաժողովը որոշել է «Տ-Քնսթրաքշն» ՓԲԸ-ի հայտը մերժել և հաղթող (ընտրված) մասնակից ճանաչել հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

vi. «Տ-Քնսթրաքշն» ՓԲԸ-ի կողմից Երևանի քաղաքապետարանի կողմից հայտարարված «ԵՔ-ԳՀԱՇՁԲ-20/118» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին մասնակցության հայտ ներկայացնելիս՝ որպես հայտի ապահովում, գնահատող հանձնաժողովին է ներկայացվել «Հայբիզնես» ՓԲԸ-ի կողմից 26.08.2020թ.-ին տրամադրված թիվ 854-48 բանկային երաշխիքը (այսուհետ նաև՝ Երաշխիք), որի համաձայն՝ երաշխիքը գործում է հայտ ներկայացնելու օրվանից մինչև 28.12.2020թ.-ը ներառյալ:

vii. «ԵՔ-ԳՀԱՇՁԲ-20/118» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի (այսուհետ նաև՝ Հրավեր) թիվ 2 հավելվածով նախատեսված աշխատանքների կատարման օրացուցային գրաֆիկի համաձայն՝ աշխատանքների կատարման ժամկետ է սահմանվել պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո 60-րդ օրացուցային օրը ներառյալ:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակցությանը, որ «Տ-Քնսթրաքշն» ՓԲԸ-ի կողմից 11.09.2020թ.-ին ներկայացված բողոքը հիմնավոր է, ենթակա է բավարարման, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) Օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ սույն օրենքի նպատակն է ապահովել գնումների գործընթացում հատուցման դիմաց արժեք, այն է՝

1) պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, և ծառայությունների ձեռքբերում՝ համարժեք հատուցմամբ.

2) գնումների և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացում:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

Վերոնշյալ հոդվածների վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը, փաստում է, որ գնումների օրենսդրությունը, հիմնվելով գնման գործընթացի մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային, ոչ խտրական, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարության սկզբունքների վրա, նպատակ է հետապնդում ապահովելու գնումների գործընթացում հատուցման դիմաց պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, և ծառայությունների ձեռքբերումը՝ համարժեք հատուցմամբ, և որ ամենակարևորն է՝ գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացման ապահովումը:

Ինչպես նաև, Բողոքներ քննող անձը հարկ է համարում հավելել, որ վերոնշյալ սկզբունքների ապահովումն ու իրականացումը գնումների օրենսդրության շրջանակներում իրացնելու համար, անհրաժեշտ պայման է նաև ցանկացած անձի՝ գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք ունենալու սկզբունքը՝ անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից:

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մասնակիցը հայտով, հրավերով սահմանված պահանջով ներկայացնում է հայտի ապահովում, որի չափը հավասար է հայտով առաջարկվող գնի մինչև հինգ տոկոսին: Հայտի ապահովումը ներկայացվում է միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի կամ բանկային երաշխիքի կամ կանխիկ փողի ձևով: Կանխիկ փողի ձևով ներկայացված հայտի ապահովումը պահվում է լիազոր մարմնի անվամբ բացված գանձապետական հաշվում:

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ (30.07.2020թ.-ի թիվ 1275-Ն փոփոխություններով) հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 32-րդ կետի 1-ին ենթակետի «ե» պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է հրավերով նախատեսված դեպքերում հայտի ապահովում: Եթե հայտի ապահովումը ներկայացվում է բանկային երաշխիքի ձևով, ապա գնման ընթացակարգն էլեկտրոնային եղանակով կազմակերպված լինելու դեպքում ներկայացվում է երաշխիքի բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը՝ պայմանով, որ դրա բնօրինակը գնահատող հանձնաժողովին ներկայացնում է մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուն հաջորդող աշխատանքային օրվա Երևանի ժամանակով 17:00-ն՝ ուղեկցող գրությամբ:

Կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման և գնահատման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում է գնային առաջարկը, կամ եթե այն ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, բացառությամբ սույն կարգի 41-րդ կետով նախատեսված դեպքի:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Վերոգրյալ իրավակարգավորումների լույսի ներքո, Բողոքներ քննող անձը փաստում է, որ մասնակիցը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով հայտ, որը ներառում է մասնակցի կողմից ներկայացված դիմում-հայտարարությունը, գնային առաջարկը, հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ): Ընդ որում, Կարգի 41-րդ կետը ուղղակիորեն սահմանում է արձանագրված անհամապատասխանությունը շտկելու անթույլատրելիություն հայտում ներառվող միայն գնային առաջարկի համար, այն էլ՝ որոշ բացառություններով: Սույն կետի իմաստից բխում է, որ մնացած բոլոր դեպքերում հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Հայտերի գնահատումն իրականացվում է հրավերով սահմանված կարգով և հրավերով նախատեսված պայմաններին չհամապատասխանող հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են, ներառյալ եթե մասնակիցը մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուն հաջորդող աշխատանքային օրվա Երևանի ժամանակով 17:00-ն գնահատող հանձնաժողովին չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը:

Վերոգրյալ իրավանորմերի համալիր վերլուծությունը՝ գործով հաստատված փաստերի գնահատմամբ, թույլ է տալիս եզրակացնել, որ Երևանի քաղաքապետարանի կողմից Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի բակերի բարեկարգման աշխատանքների ձեռքբերման նպատակով 21.08.2019թ.-ին հայտարարված «ԵՔ-ԳՀԱՇՁԲ-20/118» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին մասնակցելու նպատակով 28.08.2020թ.-ին հայտ ներկայացրած «Տ-Քնսթրաքշն» ՓԲԸ-ն որպես հայտի ապահովում, գնահատող հանձնաժողովին է ներկայացվել «Հայբիզնես» ՓԲԸ-ի կողմից 26.08.2020թ.-ին տրամադրված թիվ 854-48 բանկային երաշխիքը, որի համաձայն՝ երաշխիքը գործում է հայտ ներկայացնելու օրվանից մինչև 28.12.2020թ.-ը ներառյալ:

Հանձնաժողովի 28.08.2020թ.-ի նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ գնահատող հանձնաժողովը հայտերի բացման և գնահատման ընթացքում հրավերի պահանջների նկատմամբ արձանագրել է անհամապատասխանություն, մասնվորապես՝ «Տ-Քնսթրաքշն» ՓԲԸ-ի կողմից ներկայացված բանկային երաշխիքի մեջ նշված է, որ այն գործում է մինչև 28.12.2020թ.-ը ներառյալ, այն դեպքում, երբ հայտի ապահովումը պետք է վավեր լինի հայտը ներկայացվելու օրվանից հաշված 90 (իննսուն) աշխատանքային օր, ինչով պայմանավորված Հանձնաժողովը՝ Կարգի 41-րդ կետի համաձայն, որոշել է կասեցնել նիստը և առաջարկել Մասնակցին մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել առկա անհամապատասխանությունը:

Հանձնաժողովի 03.09.2020թ.-ի նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ «Տ-Քնսթրաքշն» ՓԲԸ-ն 31.08.2020թ.-ին ծանուցվել է առկա անհամապատասխանությունը շտկելու վերաբերյալ և մինչև ս.թ սեպտեմբերի 1-ը պարտավոր էր շտկել անհամապատասխանությունը: Սակայն «Տ-Քնսթրաքշն» ՓԲԸ-ի կողմից շտկված փաստաթղթերը ներկայացվել են 02.09.2020թ.-ին, ժամը 10:59-ին: Հետևաբար, Կարգի 42-րդ կետի համաձայն, եթե մասնակիցը սահմանված ժամկետում չի շտկում առկա անհամապատասխանությունը, ապա հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է:

Հաշվի առնելով վերոգրյալը, Հանձնաժողովը որոշել է «Տ-Քնսթրաքշն» ՓԲԸ-ի հայտը մերժել և հաղթող (ընտրված) մասնակից ճանաչել հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

«ԵՔ-ԳՀԱՇՁԲ-20/118» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի թիվ 2 հավելվածով նախատեսված աշխատանքների կատարման օրացուցային գրաֆիկի համաձայն՝ աշխատանքների կատարման ժամկետ է սահմանվել պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո 60-րդ օրացուցային օրը ներառյալ:

Օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետի համաձայն՝ հայտի ապահովումը նշված օրենքով նախատեսված դեպքերում մասնակցի կողմից հայտով ստանձնած պարտավորությունների կատարումն ապահովող միջոց է:

Օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտը, որը գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված դեպքերում պարունակում է նաև հայտի ապահովումը, վավեր է մինչև սույն օրենքին համապատասխան պայմանագրի կնքումը, մասնակցի կողմից հայտը հետ վերցնելը, հայտի մերժումը կամ գնման ընթացակարգը չկայացած հայտարարվելը: Նշված դրույթը ներառված է նաև վերոհիշյալ ծածկագրով գնման ընթացակարգի Հրավերում:

Այսինքն վերոհիշյալ նորմերի ուժով հայտի ապահովման գործողության ժամկետը պետք է պակաս չլինի Օրենքին համապատասխան պայմանագրի կնքման, մասնակցի կողմից հայտը հետ վերցնելու, հայտը մերժելու կամ գնման ընթացակարգը չկայացած հայտարարվելու ժամկետից:

Միաժամանակ գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված են մասնակիցների հայտերի գնահատման, հաղթող մասնակցին որոշելու, անգործության, պայմանագիր կնքելու առավելագույն ժամկետները, որոնք գնանշման հարցման ընթացակարգի դեպքում կազմում են 30-60 օրացուցային օր: Ընդ որում սույն դեպքում, հարկ է նկատել, որ աշխատանքների կատարման ժամկետ է սահմանվել պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո 60-րդ օրացուցային օրը ներառյալ՝ հիմք ընդունելով Հրավերի թիվ 2

հավելվածով նախատեսված աշխատանքների կատարման օրացուցային գրաֆիկը: Սույն դեպքում, «Տ-Քնսթրաքշն» ՓԲԸ-ի կողմից Երևանի քաղաքապետարանի կողմից հայտարարված «ԵՔ-ԳՀԱՇՁԲ-20/118» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին մասնակցության հայտի հետ միաժամանակ ներկայացված «Հայբիզնես» ՓԲԸ-ի կողմից 26.08.2020թ.-ին տրամադրված թիվ 854-48 բանկային երաշխիքի սահմանված ժամկետն ավելին է, քան փաստացի կնքվելիք պայմանագրի ամբողջ ծավալով կատարման վերջնաժամկետը:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ գնահատող հանձնաժողովի նիստի թիվ 2 արձանագրության 4.1 կետով կայացրած՝ «Տ-Քնսթրաքշն» ՓԲԸ-ի կողմից ներկայացված բանկային երաշխիքում անհամապատասխանություն արձանագրելու և շտկում պահանջելու վերաբերյալ որոշումը չի բխում գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջներից և միտված չէ ապահովելու գնումների և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացմանն ու պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնմանը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 1-ին կետի «բ» ենթակետով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը.

Ո Ր Ո Շ Ե Ց

«Տ-Քնսթրաքշն» ՓԲԸ-ի կողմից 11.09.2020թ.-ի ներկայացրած ԳԲՔԱ-ԼՕ-2020/94 ծածկագրով բողոքը բավարարել ամբողջությամբ:

Պարտավորեցնել «ԵՔ-ԳՀԱՇՁԲ-20/118» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին դադարեցնել՝

- հանձնաժողովի 28.08.2020թ.-ի նիստի թիվ 2 արձանագրության 4.1 կետով կայացրած՝ «Տ-Քնսթրաքշն» ՓԲԸ-ի կողմից ներկայացված բանկային երաշխիքում անհամապատասխանություն արձանագրելու և շտկում պահանջելու վերաբերյալ որոշումը,

- հանձնաժողովի 03.09.2020թ.-ի նիստի թիվ 3 արձանագրության 1.1 կետով կայացված՝ «Տ-Քնսթրաքշն» ՓԲԸ-ի հայտը մերժելու մասին որոշումը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**